Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության 2003 թվականի ծրագրի» շրջանակներում, հրատարակել և Ձեզ էր ներկայացրել «Հաշվապահական հաշվառման պարզեցված ուղեցույց փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար»:

Այս երեք տարիների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ստացել է բազմաթիվ արձագանքներ Ուղեցույցի կարևորության, օգտակարության վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Ուղեցույցը օգնել է բազմաթիվ ՓՄՁ սուբյեկտների՝ առավել արդյունավետ կազմակերպել հաշվապահական հաշվառման գործընթացը:

Հաշվի առնելով Ձեր խնդրանքը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը վերահրատարակում է Ուղեցույցը, որում հաշվի են առնվել առաջին հրատարակությունից հետո օրենսդրությունում կատարված բոլոր փոփոխությունները՝ 2006 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ:

Ուղեցույցի վերամշակման աշխատանքները իրականացվել են «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից (գլխավոր տնօրեն ***Թաթուլ Մովսիսյան***, գլխավոր տնօրենի տեղակալ ***Ղուկաս Աթոյան***, ավագ խորհրդատու ***Արթուր Մարտիրոսյան***, խորհրդատու ***Սերգեյ Վարդանյան***):

* * *

Ուղեցույցի նպատակն է գործնական օգնություն ցուցաբերել հաշվապահական հաշվառման նոր համակարգով աշխատող փոքր և միջին ձեռնարկություններին:

Ուղեցույցը բաղկացած է չորս գրքերից: Առաջին գրքում ներկայացված են հաշվապահական հաշվառման բոլոր այն ստանդարտները, որոնք առավել կիրառելի են ՓՄՁ սուբյեկտներում: Յուրաքանչյուր ստանդարտ պարզեցված է օրինակներով, համապատասխան հաշվապահական ձևակերպումներով: Հարկային օրենսդրության բաժնում մանրամասն քննարկվել են բոլոր հարկատեսակները, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները: Քննարկվել են նաև անհատ ձեռնարկատիրոջ և գյուղատնտեսությունում հարկման առանձնահատկությունները:

Մյուս երեք գրքերում ներկայացված են համապատասխանաբար արտադրության, ծառայությունների և առևտրի ոլորտների կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրության առանձնահատկությունները: Յուրաքանչյուր գրքում կոնկրետ օրինակներով պարզաբանված են հաճախ հանդիպող գործառնությունները, տրված են համապատասխան հաշվապահական ձևակերպումները, լրացված են սկզբնական հաշվառման փաստաթղթերը, ներկայացված են ֆինանսական հաշվետվությունների կազմման օրինակները:

Հուսով ենք, որ սույն ուղեցույցը ըստ արժանվույնս կգնահատավի և իրական ներդրում կունենա Ձեր գործունեության զարգացման գործում:

Շարքը բաղկացած է 4 գրքերից.

1. *«Հաշվապահական հաշվառման վարումը փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներում. գործնական ուղեցույց»,*

2. *«Հաշվապահական հաշվառման վարման առանձնահատկությունները արտադրության ոլորտի կազմակերպություններում»,*

3. *«Հաշվապահական հաշվառման վարման առանձնահատկությունները ծառայության ոլորտի կազմակերպություններում»,*

4. *«Հաշվապահական հաշվառման վարման առանձնահատկությունները առևտրի ոլորտի կազմակերպություններում»:*

Մեր շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիային (ՀՀԱԱ), ի դեմս ասոցիացիայի նախագահ ***Հովհաննես Պետրոսյանի***՝ ուղեցույցի մշակման աշխատանքները կազմակերպելու համար, և ուղեցույցի հեղինակներին:

**«Հաշվապահական հաշվառման վարումը փոքր և միջին ձեռնարկություններում»** գրքի հեղինակներ՝

- ***Վարդիթեր Գրիգորյան*** (ՀՀԱԱ հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ, ՀՀԱԱ խորհրդատվական բաժնի ղեկավար), և
- ***Արամ Մեսրոպյան*** (ՀՀԱԱ հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ):

**«Հաշվապահական հաշվառման վարման առանձնահատկությունները արտադրության ոլորտի կազմակերպություններում», «Հաշվապահական հաշվառման վարման առանձնահատկությունները ծառայության ոլորտի կազմակերպություններում» և «Հաշվապահական հաշվառման վարման առանձնահատկությունները առևտրի ոլորտի կազմակերպություններում»** գրքերի հեղինակներ՝

- ***Թաթուլ Մովսիսյանին*** (ՀՀԱԱ խորհրդի անդամ, ՀՀԱԱ հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահ),
- ***Ղուկաս Աբոյանին*** (ՀՀԱԱ հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ),
- ***Հրաչիկ Երկնափեշյանին*** (ՀՀԱԱ հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ), և
- ***Արամ Մեսրոպյանին*** (ՀՀԱԱ հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ):

Ուղեցույցի խմբագրման (ընթացիկ փորձաքննություն և արդյունքային մասնագիտական խմբագրում) աշխատանքներն իրականացվել են ***Թաթուլ Մովսիսյանի*** և ***Վարդիթեր Գրիգորյանի*** կողմից:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում ՀՀԱԱ խորհրդի անդամ ***Ահարոն Չիլինգարյանին*** ուղեցույցի մշակման ողջ ընթացքում մեթոդական օժանդակություն ցուցաբերելու և հարկային մասերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շնորհակալություն է հայտնում ՀՀԱԱ գործադիր տնօրեն ***Սուրեն Աղամյանին*** աշխատանքները համակարգելու և օժանդակություն ցուցաբերելու գործում:

**Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# ԲԱԺԻՆ 1.
# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 10

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 12

2.1. Կազմակերպության ստեղծումը 12
2.2. Աշխատողների հավաքագրումը 14
2.3. Փոխառու միջոցների ներգրավումը 16
2.4. Տրանսպորտային միջոցի վարձակալությունը 17
2.5. Հիմնական միջոցների ձեռքբերումը 18
2.6. Գովազդի գծով ծախսերը 22
2.7. Կանխավճարի ստացումը 22
2.8. Աշխատավարձի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի հաշվարկը 23
2.9. Աշխատավարձի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունների մարումը 26
2.10. Գործուղման ծախսերը 29
2.11. Պաշարների ձեռքբերումը և օգտագործումը 31
2.12. Հեռահաղորդակցության գծով ծախսերը 36
2.13. Վարձավճարները 37
2.14. Հիմնական միջոցների վրա կատարվող ընթացիկ ծախսերը 40
2.15. Հիմնական միջոցների մաշվածությունը 43
2.16. Եկամուտների հաշվեգրումը 44
2.17. Դեբիտորական պարտքերի մարումը 46
2.18. Ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության հաշվարկը 47
2.19. Հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ամփոփումը 48
2.20. Հաշվապահական հաշվառման վարման ձևերը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը 50

ԳԼՈՒԽ 3. ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 59

3.1. Ընդհանուր դրույթներ 59
3.2. Զուտ շահույթի բաշխումը, պահուստային կապիտալի ձևավորումը, շահաբաժինների հայտարարումը և վճարումը 60
3.3. Հասույթի ճանաչումը 62
3.4. Աշխատավարձի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի հաշվարկը 63
3.5. Աշխատավարձի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունների մարումը 65
3.6. Նյութերի օգտագործումը 66
3.7. Կոմունալ ծախսերը 66
3.8. Հաստատագրված վճարի գծով ծախսը 67
3.9. Գույքահարկի գծով ծախսը 67
3.10. Հիմնական միջոցների մաշվածությունը 68
3.11. Փոխառության գումարի մարումը 69
3.12. Կրեդիտորական պարտքի մարում 69
3.13. Հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ամփոփումը 70

## ԲԱԺԻՆ 2.
## *ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ԳԼՈՒԽ 4. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ 80
ԳԼՈՒԽ 5. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ 87
ԳԼՈՒԽ 6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ 91
ԳԼՈՒԽ 7. ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅՈՒՆԸ 102